

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ՏԵՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

49^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 24

10 ՅՈՒՆԻՍ 1900

Մասիս շաբաթերթի տարեկան բաժանորդագիրն է կես օսմ. ոսկի թե՛ Կ. Պոլսոյ եւ թե՛ գաւառներուն համար, կանխիկ : Արտասահման՝ 12 Ֆրանկ : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկէն :

Հրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առօրէն, եւ կը զտուի Բերայի բոլոր ծխավաճառներուն ու Պահչե-Գաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն հոյ :

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐՍԻ

ՀԱՍՑԻ

دورعلیهده غلطهده «ماسیس» غزتهسی ادارهسی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Կ. Պոլիս, Ղալաթիս, Նորաստանկեան Խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

THE GRESHAM ԿՐԷՇԱՄ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿԵԱՆՔԻ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆՈՒԱԾ Ի ԼՈՆՏՈՆ

1848 ԻՆ

Դրամագլուխ եւ երաժխաւորութեան գումար աւելի քան 175,000,000 Ժրանք

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՔ՝ ՊԷՅԲԸՐ ԵՒ ԷՏՈՒԸՐՏՍ

Քսանթօքուլօ խան, Պանչեղաբու, Կ. Պոլիս:

“ԱԼԼԷԱՆՁԱ”

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (ՃԵՆՈՎԱ)

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳՈՒՄԱՐ 87,455,645

Ընկերութիւնը կը կնքէ կեանքի ապահովագրութիւններ խառն, եւ որոշ պայմանաժամերով, օժիտի, ցկեանս կամ ժամանակաւոր եկամուտներու, հետեւեալ առաւելութիւնները ընծայելով.

Մէկ տարուան ապահովագրութիւնէ ետքը, երբէք ապահովագիրները (քոյիս) չեն ջնջուիր, մենամարտն ու անձնապահութիւնը կ'երաշխաւորուին, ընաւ ո եւ է արհեստի կամ ուղեւորութեան համար յաւելուածական ապահովագին (քոյիս) չի պահանջուիր, ապահովագիրներու վճարումը դադարելու պարագային՝ ապահովագիրը կը գնուի ըստ նշանակեալ արժէքին, ապահովագրի ծախք չառնուիր, ընկերութեան շահերուն կը մասնակցի ապահովագրուողը:

Արկածեալներու դեմ ապահովագրութիւն մահուան կամ աշխատելու անկարողութեան պարագային ժամանակաւոր անկարողութեան համար օրական վճարում կ'ըլլայ:

Երաշխաւորութիւններ՝ հեծանիւի, ձիու, կառքի, թրամուէյի, արկածաւորի, շողեանաւի, առադատանաւի, միջատներու խայթումքի եւ ապահովագրուողին արհեստին մէջ կամ անկէ դուրս պատահելիք ուրիշ ո եւ է արկածի դէմ:

Ընկերութիւնը կ'ապահովագրէ օրինաւոր անձնապաշտպանութիւնը, ինչպէս նաեւ մարդ մը կամ ինչք մը ազատելու առթիւ պատահած ո եւ է արկած:

Ընկերութեան պանքան է՝ ՔՐԷՏԻ ԼԻՈՆԷ

Ընդհանուր գործակաւսար Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

Կ. Պոլիս, Հաճորուլօ խան, թիւ 53, 54, 55, 56

ԻՍԹԸՐԵ ԳԱՌԻՆԹԻՍ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ (Ի ՀԸԼԼ)

Նպաստաւոր պայմաններով կ'ապահովագրուին ամեն տեսակ շէնք, կաւասի, սպրանք

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 7,250,000 ՅՐԱՆՔ

Ընդհանուր գործակաւսար Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

Կ. Պոլիս, Հաճորուլօ խան, թիւ 53, 54, 55, 56

Ընկերութեան զբամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՈՆԷ

ՄԱՍԻՆ

49րդ ՏԱՐԻ

— 10 ՅՈՒՆԻՍ 1900 —

ԹԻԻ 24

ԲՈՎԱՆԻ ԴԱԿՈՒԹԻԻՆ

Ամուլ պայքար. ՏԻԻՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ. — Մասեհաստական. եզնիկի գերմաներեն բարգմանութիւնը. ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿՈՍ ԴԻՈԴՈՍԱՆ. — Ամերիկեան կեանք. Միսիգ Հէքի Կրիկ. (Ամերիկեան Հանդէսէ մը քաղուած). — Վարժապետին ցաւը ՌՈՐԲԵՐԵԱՆ. — Յոսոպ բուշուն (Ոսանաւոր-Աւանդակալ) ԱՐՏ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ. — Իգեան հովեր. Գեղը կամ Ալեմ-Տաղի. ԴԵՄԱՍ. — Նայուածքը (Բանաստեղծութիւն) Կ. ՈՍԿԵԱՆ. — Մեկնութեան փորձեր. Կեանքը. ԱՐՄԻՆԷ:

ԱՄՈՒԼ ՊԱՅՔԱՐ

Նորավայերուն դէմ մղուած ծիծաղելի պայքարը նոր չէ:

Այն օրէն որ մեր լրագրութեան մէջ մուտ գտաւ գրականութեան այդ նորարուեստ ճիւղը, — զոր հասարակ գրիչներու տրուած չէ մշակել, — գրաւիչ նորութեան մը հրապոյրը ընծայելով ընթերցողներուն, տափակ միտքեր ու կեղծ բարոյամուշներ փորձեցին «գայթակղութիւն» պատալ: Տասնըհինգ տարի մը կայ որ այս սյապէս է, ու ատեն ատեն՝ սուսկի ուլս կը բուսնին անճանաչ յոգուածա. ծագիրներ սրոնք բողոքելու կ'ըլլեն գրական գեղեցիկացն էջի մը դէմ սրուն բոլոր մեղքն է սիրոյ պատմութիւն մը պարունակելը կամ հոգեկան խնդիր մը բրբրելը:

Թարգմանեցէք, որչափ որ կուզէք, օտար լեզուէ վիպասանութիւններ կամ վիպակներ թէեւ հրաշակերտներ չլլան ամէնքն ալ, — չափերը տողի հաշիւով գրուած թերթիներ, յաւիտենապէս նոյն չըմանակին մէջ դառնալու սահմանուած. — անգիրտակցարնոր կը մարտնչին ու կուրօրէն կը հաւնուին: Բայց ընտանեկան տաւամ մը սրուն հերոսը Սլաւա կոչուելու տեղ Օհանճան կոչուի եւ հերոսուհին՝ Ժիւլիի տեղ Զարուկ, նորավայ մը սրուն գործողութեանց թատրը փոխանակ Բարիդի մէկ արուարձանը

ներկայացնելու՝ մեզի մօտիկ գաւառացին քաղաք մը ըլլայ ու պատկերացուցած բարբերը՝ մեր կեանքէն, — քրթմնջիւնը կը սկսի կարգ մը մարդոց կողմէ, նոյնքան սահմանափակ մտքի տէր՝ սրքան սահմանափակ է իրենց թիւը:

Սովորաբար, այս մաքրակրօն պարոնները հրապարակ կը նետուին կա՛մ բոլորովին անճանօթ անունի մը յանձնապատասխանութեամբ եւ կա՛մ դիմակի մը տակ պահուրտելու քաջութեամբ, — ակամքը խօսի թողկոյին — ուրոնք կը ներեն իրենց՝ ամէն արեղցիբխուս թիւն դուրս տալ. ո՞վ պիտի ճանչնայ զիրենք: Անցեալները, էսրէրօ մը քմահաճ կերպով մեկնարանելու ելաւ Սիպիլի Երջանկոյթեան գաղտնիքը. եթէ չի պատասխանեցինք իրեն, գէթ խմբագրի պարտականութիւննիս կատարելու համար մեր յարգելի աշխատակցութիւն նկատմամբ, պատճառն այն էր որ . . . բան մը չհասկցանք իր գրուածքէն: Այս անգամ, նոյն կացութեան մէջ կը գտնուինք Կարապետ Ստեփանեանի մը հանդէպ որ « Բարանայր (1) ատարճան համբերելէ ետք » իր բարիութեան կայծակները կը թափէ Զօհրատի վերջին երկու նորավայերուն վրայ, — Մարապետը ու Փոքուրդը: Եթէ

խնդալու տրամադրութիւն ունիք, ու առարկան կը պահիսի ձեզի, թղթատեցէք 448-450 էջերը Արեւելեան Մամուլի 11րդ թիւին « սր դեռ փոշիի չէ դատապարտուած » : Գիտոր թերթին խմբագրութեանն է թէ յօդուածագրինը, — չեմ գիտեր, — բայց բաւական ճարտար է՝ յօդուածը կարգացնելու համար. տաղանդաւոր գրագէտ—փաստաբանին անունը խոշոր գիրերով զրոյմուած պիտի տեսնէք էջին ճակատը, ինչպէս երբեմն յարգի ու ծանօթ եղիւիք մը կը դնեն ցուցափեղդի մը վրայ սրուն մէջ կեղծ ապրանքներ միայն պիտի գտնէք : Այստեղ, հմայքը շատ չի տեսեր սակայն, վասնզի առաջին տողէն, առաջին բառէն գիտակցութիւնը կունենաք թէ ցնորածի մը դէմ կը գտնուիք որ, — իր ապաստանած վերնագրին տակ որուն կը կցէ Կէօթէի անունն ալ, — գաղափար մը ունենալու, շիտկէ շիտակ պարբերութիւն մը շարադրելու, ճաշակաւոր խօսք մը ըսելու անձարակ՝ ելեր կը բողբոջէ յանուն բարոյականի, յանուն հայկաբանութեան, յանուն գրականութեան, յանուն խղճի, — մտնալով միայն աւելցնել . . . յանուն տխմարութեան :

Չարժեք գրադիլ իրմով. անցողարար, այս յիշատակութիւնը բրինք, ցուցնելու համար թէ ինչ տեսակ խելագատակներէ ծնունդ կառնէ նորավէպներու — եւ ամէնէն գեղեցկագոյններուն — դէմ պայքար մղելու յա-

ւակնասութիւնը : Կը ցաւինք միայն որ լուրջ նկատուած թերթեր իրենց դիւրին հիւրընկալութեամբ անուղղապէս կը քաջալերեն այս ինքնակոչ ուղղիչները մեր գրականութեան ու մեր լեզուին :

Չէ՛, միամիտ պարոն, դուն եւ քեզիպէսները պարտաւ տեղը չունչ եւ մեզան կը սպառէք, մարծելով կոտրել վարկը այն գրագէտներուն որոնք առաջին տեղը կը գրաւեն Պոստայ մամուլին մէջ՝ եւ իրենց ճշմարիտ արժանիքովը կը վայելեն համբաւ մը որ չի պիտի տկարանայ երբեք քու կարկառած . . . Բաթֆօրեմիդ(°) կամ ուրիշներու կեղծաւոր պարկեշտութեանը առջեւ : Գրասէրները, բանասէրները, ու նոյն իսկ ժողովուրդին այն մասը որ պարզ ընթերցում մը գիտէ՝ հաճոյքով պիտի կարդան միշտ Զօհրապի, Սիպիլի ու ժամանակակից ընտրեւագոյն արձակագիրներուն ու բանաստեղծներուն գրուածքները : Նորավէպը, սիրային պատմութիւնները, հագերանական հարցերը՝ միշտ իրենց արժանաւոր տեղը պիտի ունենան Մաւիւնի մէջ, Մատենախօսականի մը ու Բժշկականի մը քով : Այն թերթերու վարիչները որոնք գրկարաց կ'ընդունին ձեզի պէս տիրացուները, կրնան մեզմէ տարբեր ուղղութեան մը հետեւիլ, առանց սակայն պէտք ունենալու ձեր ձեռքովը քար նետել տալ դրացիին պարտէզը :

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՆԱՅՈՒԱԾՔՆ

Երբ արշալոյսը կը ծագի,
Մութ մութ սարերը լեռներուն
Կը գուարքանան քոսորագեղ,
Մըղոններով մինչև հեռուն :


Ու քու նայուածքդ ալ, ո՞վ աղջիկ,
Երբ կիցնայ սև ճակտիս վրան,
Սրտիս բոլոր խորշերը մութ
Անոյշ լուսով մը կը լենան :

Բայց արեւուն ալ վերջ մը կայ,
Կը գարնէ ժամն իրիկունին,
Ու լեռներուն սարերը լոյս
Աղջամուղջով կը ծածկուին :

Ա՜հ, կը վախճամ ես այն օրէն,
Ուր ալ չիցնայ պիտի ճակտիս,
Աչքերովդ հուր նայուածքն անոյշ,
Որ յոյսերով ապրեցուց զիս :

Գ. ՈՍԿԵԱՆ

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ



ԵԶՆԻԿԻ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

J. M. Schmid հայագէտ Գերմանացիին նոր աշխատասիրութիւնը՝ որ Վիեննական Միտիմարեան միարանութեան տպարանէն լոյս տեսաւ վերջերս՝ կարեւոր գործ մըն է իր տեսակին մէջ, Մինչեւ ցարդ եղծ աղանդոցէն քանի մը հատուածական թարգմանութիւններ միայն կատարուած էին առաւել կամ նուազ ընդարձակութեամբ, որոնցմէ տմէնէն նորն ու համառոտագոյնը եղաւ Ermonի այն տկար փորձը՝ (Revue de l'Orient chrétien) [1896] որ լեցուն էր անճշդութիւններով, ինչպէս ցոյց տրուեցաւ արդէն Բիւրակմի մէջ :

Այս թարգմանութիւնը սակայն՝ որուն վրայ կը խօսինք՝ ո՛չ միայն իրր ամբողջական այլ եւ իրր խնամեալ գործ՝ պատիւ կը բերէ թարգմանչին : Յաջողութիւնը՝ ինչպէս յայտնի է՝ Վիեննայի Միտիմարեանց անդամներէն Հ. Գրիգորիոս Գալէմբարեանի կը պարտի թարգմանիչը, թէ եւ իր հրատարակութեան յառաջարկին մէջ (էջ 12) հաղիւ աշխատակից առնելին տակ յիշատակած է զայն :

Թարգմանիչը առաջագրած է ըստ կարելւոյն հաւատարիմ մնալ հայ հեղինակին ոճին ու դարձուածներուն . բազմաթիւ լուսարանութիւններ բրած ու իրեն աշխատակցող գիտնականին «բնագրական ուղղութիւններէն» սղօգտուած է մեծապէս : Այսու ամենայնիւ ինչ ինչ կէտերով գիւրին է գուշակել թէ թարգմանիչը իր աշխատակցէն անկախ մնալու ու երկրորդական դեր մը կատարած չըլլալու համար՝ մասնաւոր ճիգ մը ուզած է ի գործ դնել : Զոր օրինակ, երբ եզնիկի «երագազանք ձգիցին» բառերը (Ա. իե.) կը թարգմանէ որսի գազաններ կը սրտան (Է) իրր թէ զմիւռնական տպագրութեան «էրէ գազանք» տարբեր ընթերցուածը նախընտրած ըլլար, կամ երբ «առ երես արարած իցէ» անխմտ խօսքը կը թարգմանէ կերպարանքով արարած մը ըլլայ, Հ. Գալէմբարեանի (նախապէս

Նորայրի) «առ երէս արած իցէ» սրբագրութիւնը ծանօթութեան մէջ նետելով :

Պէտք է ըսել թէ թարգմանչին լուսարանութիւններէն մեծ մասը (մա՛նաւանդ Ա. գրքի վերաբերմամբ) արժէք մը չունին . իսկ մէկ քանի կրօնական-պատմական ծանօթութիւնները՝ որոնք եղծ աղանդոցի վերջին գիրքերուն իրրեւ մուտք կը ծառայեն՝ կրնան բան մը արժէլ նիւթին անտեղեակ եղողներու համար : Շատ տեղ աւելորդն ըսուած ու կարեւորը մոռցուած է. զոր օրինակ, երբ «Որ էն»ը կը բացատրուի (Ա. գիրք ծան. 7) ու Մծղնեայ բառը պիղծ կամ անուար կը թարգմանուի (Դ. գիրք, էջ 199) առանց ո եւ է բացատրութեան : Թարգմանիչը՝ առաջին ու վերջին ըլլալով՝ քերականական ծանօթութիւն մըն ալ դրած է (Ա. գիրք ծան. 5) հայերէնի մէջ ստէպ գործածուած սեռական-ածական բառերու hellénistique ձեւը յիշելով, մինչդեռ «ի յստակութիւն լուսոյն» խօսքը այդ բացատրութեան չկարօտիր :

Գանք այժմ թարգմանութեան վրայ գաղափար մը տալու : Այս մասին պէտք չենք տեսներ ամբողջովին բաղդատութեան գնել բնագիր ու թարգմանութիւն : Բաւական կը համարինք միայն եզնիկի Ա. գրքին ինչ հատուածը աչքի առջեւ ունենալ, ու հետեւել թարգմանութեան ինչ ինչ կէտերու մէջ :

Ծանօթ է բանասէրներուն եզնիկի առեղծուածական սա խօսքը . «Ի զուր է կա՛լ կա՛լն ասել ումք ի կալս եւ ոչ ա՛ռ ա՛ռ» : Թարգմանիչը բառ առ բառ ու ճիշդ կը թարգմանէ խօսքը . բայց միշտակներուն բերանը կը դնէ զայն, իրր թէ անոնք ըլլային կալին մէջ պոռացողները «կա՛լ կա՛լ» եւ ո՛չ «ա՛ռ ա՛ռ» . ու վարը պարզ ծանօթութիւն մը կ'աւելցնէ իր կողմէ . «նախապաշարուած մը կ'աւանդուի հաւանարար» : Կ'երեւի թէ թարգմանիչը հոս ալ իր հասկացողութեան ազաւինած է . ապա

թէ ոչ, իր հմուտ աշխատակիցն անշուշտ պիտի գիտեւ տար իրեն՝ թէ վիշապները խօսեցնելու խնդիր չկայ բնագրին մէջ, Բաց աստի՛ տւելորդ էր ըլլար գէթ սա կարծիքը մէջ բերել թէ «վասիկստ մշակները կը պոսային այդ կա՛ն կա՛ն» վիշապներուն վասի ազդելու համար», (Հին Հաւասթ էջ 171) որչափ ալ բանաւոր չնկատուէր այսպիսի բացատրութիւն մը, վասնզի «ա՛ն ա՛ն» ձայնարձակութիւնը աւելի նպատակայարմար կրնար ըլլալ իր յաջող (— հաջող) հնչունութեամբը: Ըստ իս՝ հայ կալուորները թերեւս բառախաղ մը կ'ընէին այդ երկու հոմանուն բառերուն գործածութեամբը շփոթեցնելով վիշապներն, որպէս զի չկարենային բան մը հասկնալ, մինչդեռ «ա՛ն ա՛ն» ի հասկնալի ձեւը կրնար ակամայ հրաւէր մ'ըլլալ անոնց՝ կալին ցորենը կրելու: Դեւերը խորելու պարզամիտ հնարք մըն էր այն, ինչպէս Զինացիները կը խարեն զանոնք կեղծ թղթադրամներով: — Դեւերը կ'ըսենք, վասնզի՝ հակառակ հարեւանցի տեսութեան եզնիկի՝ — վիշապները միշտ դեւեր էին յովիդային հաւատալիքի մէջ:

Յառաջ տանելով իր խօսքը՝ եզնիկ կը ջանայ հաստատել թէ՛ վիշապները մեծամեծ օձեր են, եւ թէ՛ իրենց որսն ու կերակուրը մանր մանր ճճիներ ու անասուններ են եւլն: Թարգմանիչը այդ տողերը թարգմանելէ վերջ՝ բնագրին «եւ ոչ որս երբեք՝ որպէս մարդկոն՝ արարեալ են վիշապաց կամ առնիցեն» խօսքը կը թարգմանէ «երբեք վիշապները որս մը չեն բրած» եւլն: Յայտնի հակասութիւն մը չերեւո՞ր արդեօք այս տողերուն մէջ. վիշապներուն որսը տեսանք արդէն. — մանր ճճիներ ու անասուններ —, ի՞նչ կը նշանակէ ուրեմն ըսել թէ անոնք որս մը չեն բրած երբեք կամ պիտի չընեն: Հարցընենք թէ ո՞վ է «արարեալ են» բային տէրը. հայերէն լեզուն չներէր բնաւ որ վիշապացը վերի խօսքին մէջ իբր տէր բայի անուրի, առանց «արարեալ են» ը փոխելու «արարեալ է» ի: Թողունք որ որս առնեց ձեւն ալ առմիօրէն միայն կրնայ ըլլալ եւ ո՛չ սոկեգարեան: Այդ խօսքին վերջին պարբերութիւնը աչքի ստջեւ ունենալով սակայն (հ. բն. էջ 104) «ոչ զոր. . . ունին կապեալ առ

իւրեանս կենդանի»՝ որ լռելեայն տէր բային դեպք բառը պէտք է ըլլայ՝ հաւանաբար՝ կը տեսնենք որ թարգմանութեան շնորհիւ՝ վիշապներուն վերադրուած է այդ հրաշալիքն ալ: Յամենայն դէպս մեզ կը թուի թէ որս բառը ուղղագրութեան մը կը կարօտի յառաջ բերուած խօսքին մէջ, եթէ երբեք անյարիր կտոր մը չէ այն իր ամբողջութեամբը:

Անցնելով Աղեքսանդրի վրայ պատմուած առասպելին՝ ստույգ է որ բնագրին որ եւ է բառ չփոխելու ատեն՝ խօսքն այնպէս կը հասկցուի ինչպէս որ թարգմանուած է. սակայն հարկ կ'ըլլայ զիտողութեան առնուլ սա պարագան՝ թէ ի՛նչպէս դեւերը ուրիշ դեւ մը կը կապեն ու շիշի մը մէջ կը պահեն, եւ այն՝ «ըստ եզրուածական հնարողութեան» կամ «կախարդանօք»: Յայտնի է թէ եզնիկ (Ա իր) յանձն կ'առնու շնորհում մ'ընել թէ կախարդները թերեւս դեւ կապեն, բայց բացարձակապէս չընդունիր որ դեւերը վիրար հանեն կամ կապեն: Անտեղի չերեւիր մեզի դեպք բառը դիւրի կարգալ եւ ըստ այնմ թարգմանել՝ խօսքին իմաստը ճշգրելու համար:

Սոյն այս հատուածին մէջ է նաեւ «երագագանք ձգիցին» բառերու սխալ թարգմանութիւնը՝ զոր վերը նշանակեցինք:


Հատուածին վերջին տողերուն (Հ. բն. 107) թարգմանութիւնն ալ թէ վիշապը կը յաջողի երբեմն յօգս ի վեր բարձրանալ «եւ զամբք ինչ անուանելովք» բառական հաւատարմութեամբ եղած է, թէ եւ թարգմանիչը կատկածելի կը գտնէ եզրակրք բառը ծանօթութեան մէջ: Մենք ալ կատկածելի կը նկատենք այդ եզրակրքը, եւ կ'ընտրենք կարգալ զայն շաւրք ինչ անուանելովք, օգտարնակ եւ շնագրի առէգներուն վերագրելով վիշապներ որսալու ճարտարութիւնը:

Այս մէկ քանի դիտողութիւններով նպատակ չունինք արդարեւ նուազեցնելու Նոթ աղանդոցի նոր թարգմանութեան ներքին արժէքը, կը խոստովանինք անգամ մըն ալ թէ ընդհանրապէս յաջողած է թարգմանիչը: Աննշան անձգութիւններ կամ աւելի ճիշդը խօսելով՝ յստակ հասկացողութիւնէ ինքնին խոստափող իմաստներ՝ ինչպէս են մեծ մասամբ մեր ցոյց տուածները, չեն պակսեցներ բնաւ զորքին կարեւորութիւնը: Միւս կողմանէ սակայն չենք վարանիր բնելու թէ հայագէտ Գերովանային՝ ի նպատակ իր աշխատութեանը՝ նուազ ինքնավստահութեամբ մը՝ շատ աւելի պիտի կրնար օգտուիլ իր պատմական աշխատակցէն:

ԵՂԵՆԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

ՄԻՍԻՁ ՀԵԹԻ ԿՐԻՆ

(ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՄԷՆԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԿԻՆԸ)



Մասիսի յունուարի քիւերուն մեջ Սըր Էնսրիու Քարնեկիի վրայ հրատարակած յօդուածնիս բուն հետաքրքրութիւն շարժեց մեր ընթերցողներուն ամեն դասակարգերուն մեջ : Այս անգամ, վերսկսելով Ամերիկեան Բարբերու նուիրուած բաժինը, ամերիկեան Հանդէսէ մը կը քաղենք Միսիգ Հէքի Կրիսի — նոր աշխարհի ամենեւն հարուստ եւ մանաւանդ ամենեւն գործունեայ կնոջ — կեանքին վերաբերող ուսումնասիրութիւն մը որ որքան շահեկան նոյնեւն հրահանգիչ մասեր կը պարունակէ իր մեջ :

« Ինքն իրմէս յառաջ եկած կին մը չեմ : Հարուստ ծնած եմ : Հայրս միլիտնատէր մըն էր, ինչպէս նաեւ մեծ հայրս : Բոլոր նախահայրերս ալ, մինչեւ Ռօտ-Ալէքսանի կառավարիչը՝ Ռօթէն, հարուստ եղած են » : — Այսպէս կը խօսի ինքն իր վրայով Տիկին Հէթի Կրիսն, որ Ամերիկայի ամենէն հարուստ կիներ նկատուած է : Եւ մինչդեռ կրնար Նիւ Եօքի ամենէն մեծ ահարուստ թողին մէջ ապարանք մը ունենալ, իր բնակարանը կը կազմեն Հօպօքընի մէջ՝ ի Նիու Ճէրսէյ՝ ապրիւսէ քառակուսի տան մը երկու փոքրիկ յարկերը : Երկու ելեկտրական զանգակներ կան զրանը վրայ, որոնց իւրաքանչիւրին տակ կը գտնուի Ս. Տիոնէյ անունը : Տիկին Կրիսն նախամեծար կը համարի որ հասարակութիւնը չգիտնայ թէ ուր կը գտնուի իր տունը, եւ այս անունը կը գործածէ որովհետեւ... իր սիրական շնիկին անունը « Տիոնէյ » է :

Հակառակ իր ահագին հարստութեանը, Տիկին Կրիսն աշխարհիս ամենէն գործունեայ կիներէն մէկն է : Սովորաբար Հօպօքընէն Նիւ Եօքք կը մեկնի առտուան 7ին չոգենաւով, ուր միշտ ուղարկութիւնը կը գրաւէ անոնց որ զինքը դէմքով միայն կը ճանչնան : Շատ պարզ կը հագուի : Կորովի կերպարանք մը ունի, բոլորովին առնական նկարագրով, բայց-ձայնը ցած է եւ կանայցի : Իր խոր իջած աչքերը պողպատի-գորշ գոյն մը ունին, կապոյտ երանգով մը, եւ կը թափանցեն վրադ իրր թէ մետաղի սուր ծայրեր եղած ըլլային : Բան մը չեն փախցներ իրենց տեսութենէն եւ կը չողան զուարթամտութեան

սուր զգայութեամբ մը որ զինքը աւելի սլինդ կը բռնէ իր խօսակցութեան մէջ : Մանկան մը աչքերուն չափ փայլուն են եւ այտերը վարդադոյն : Եթէ ժամանակը ու զրադումները իր ճակտին վրայ եւ բերնին չուրջը խորունկ գիծեր քաշած չըլլային, մարդ չպիտի հաւատար թէ 65 տարեկան է :

Այս կնոջ գործունէութիւնը նշանաւոր է : Նիւ Եօքք հասնելուն պէս, կ'երթայ Քէմբըլ Նէշընըլ Պանք, ուր սենեակ մը ունի, որուն մէջ յաճախ իր զգեստները կը փոխէ, դրամատան մէջ իր գրասեղանին առջեւ նստելէ ինչպէս նաեւ իրիկունը տուն դառնալէ առաջ : Բայց իր զգեստը պարզ է միշտ եւ անզարդ ու ձմեռները վար տեսակ մուշտակէ մաշած օձիք մը յաճախ պատառածներ ու կարկտաններ կը ծածկէ :

Երկու բան կայ զոր Տիկին Կրիսն չ'ուզեր ընել : Երբէք չ'ստորագրեր իր անունը՝ չէքէ կամ օրինական թուղթերէ զատ որ եւ է գրութեան մը տակ : Եւ չուզեր ըսել թէ որքան հարստութիւն ունի : Ամենէն նուազագոյն հաշուողները կ'ըսեն թէ 60 միլիօն տոլարի չափ ըլլալու է այն, այսինքն գրեթէ 14 միլիօն օսմանեան ոսկի : Ինքը կըսէ սակայն թէ այնքան չատ չէ : Բայց ուրիշներ ալ աւելի կենթադրեն իր հարստութիւնը : Ինչ որ ալ ըլլայ, սա ստոյգ է թէ Ամերիկայի մէջ ոչ մէկ կին ինքն իրեն այնքան հարստութիւն ունի, եւ ոչ ալ դրամ չահելու մասին այս տեսակ հանճար մը ճանչցուած էր երբեք կիներուն մէջ : Քէմբըլ Պանքի մէջ իր գրասեղանը առանցք մըն է, որուն վրայ միլիօններ կը թաւալին :

Իր հարստութիւնը կը բաղկանայ գլխաւորաբար պետական արժէթուղթերէ, երկաթուղիի բաժնեթուղթերէ եւ գրաւական անշարժ կալուածներէ։ Կ'ըսէ թէ այնքան չտիրեր պետական արժէթուղթերը, յորմէ հետէ քաղաքականութիւնը խառնուած է ամերիկեան ազգին ելեւմուտքին։ Հաստատուն գրաւները, ինչ տեսակ ալ ըլլան, հիմա իր չահագործեան սիրական եղանակն են։ Եթէ իր ունեցած բոլոր գրաւները՝ ժամանակին տնցած ըլլալուն համար քննէին՝ այսօր 28 եկեղեցիներ՝ զանազան յարանուանութեանց պատկանող իրը պիտի ըլլային եւ 4 գերեզմանատուններ պիտի աւելնային իր անշարժ կալուածներուն վրայ։ Ասոնցմէ զատ պիտի ունենար նաեւ մեծ գործատուներ, շքեղ տուներ, թատրոններ, ասպաստաններ, պուրակներ, ամբարանոցներ, ագարակներ, տաւրազագործարաններ, եւ խիստ ընդարձակ շահարեր գետիւններ, երկրին ամէն մասերուն մէջ։ Շատ տարիներ առաջ աչքէ անցուց այն ամբողջ ստացուածքները, որոնց վրայ ինքը գրաւներ ունէր։ Երկու տարի ճամբորդութեամբ անցուց այս նպատակաւ։

Տիկին Կրին, որ առաջ Հէթի Հօուլանտ Ռօպինսըն կը կոչուէր, ծնած է Մասսչուսէթս, Նիու Պէտֆօրտի մէջ։ Իր հայրն էր Էտուար Մօթ Ռօպինսըն, եւ մայրը՝ Հօուլէնտ ընտանիքէն, որով խնամութիւն ունի Նիու-Ինկլէնտի լաւագոյն ընտանիքներէն մէկ քանին հետ։ Տունը որուն մէջ ծնած է ինք՝ հիմա Ս. Ժօզեֆի հիւանդանոցն է։

Երբ ինքը երկու տարեկան եղաւ, մայրը մանչ զաւակ մըն ալ ծնաւ, եւ Հէթին իր մեծ հօրը տունը զրկուեցաւ նոյն քաղաքին մէջ։ Հոն բնակեցաւ շատ ժամանակ, մինչեւ իր մօրը մահը, որմէ ետքը դպրոց զրկուեցաւ։ Եղբայրը մեռաւ դեռ մանուկ, որով ինք միակ ժառանգորդ մնաց իր հօրը միլիոններուն։ Այն ատեն եւ հոն է ահա որ սկսաւ անգիտակցաբար իր ասպարէզին հիմը դնել, իբր գործի կին մը որ իրեն ազդեցութիւն մը չինեց սեղանաւորական աշխարհին մէջ եւ ինքզինքը երկրին սեղանաւորներուն գլուխը դրաւ։

«Մեծ-հօրս տեսողութիւնը կորսուած էր,

ինչպէս եւ հօրս ալ» կ'ըսէ Տիկին Հէթի, «եւ կարգաւ սորվելուս պէս իմ առօրեայ պարտականութիւնս եղաւ բարձրագոյն կարգաւ անոնց՝ աշխարհի սեղանաւորական ընտրելը։ Այսպէսով սորվեցայ թէ ինչ տեսակ արժէթուղթեր ու պարտատոմսեր կային, ինչպէս կ'եւեէջէին գիները, եւ թէ ինչ կը նշանակէին իշնադու կամ քարձրանադու խաղացող բացատրութիւնները։ 15 տարեկան եղած ատենս երբ Պօթին դպրոց գացի, ամէն օր այս գործերով զբաղուէ մը շատ աւելի լաւ գիտէի այս մասին»։

Մինչեւ այս տարիքը՝ դեռատի ժառանգուհիին դաստիարակութեանը հոգ տարաւ խնամակալ մը։ Իր կեանքին մեծ մասը ազատ անցուցած էր եւ այս է գաղտնիքը իր կտրովին։ Ամէնէն ճարտար ձի հեծնողն էր, 6 տարեկանէն սորված ըլլալով, եւ կը սիրէր դաշտային զբօսանքներ։ Իր հօրն ու մեծ հօրը օգնելէ ետքը անոնց հարստութեան մատակարարութեան գործին մէջ, իր մեծագոյն հաճոյքն էր կարգաւ։ Պօթլենի մէջ ձէյմա Լօուէլի դպրոցին երեք տարուան չրջանը պատրաստեց գինքը ընկերութեան համար, եւ մինչեւ 1860, երբ ինքն ու իր հայրը Նիւ-Եօրք եկան, չրջագայութեամբ ու այցելութեամբ անցուց իր կեանքը։

Յաջորդ հինգ տարիները խռովայող եղան։ Հայրը ուժէ իշնադու հետեւանքով իր հարստութիւնը, գրեթէ 7 միլիոն տօլար հաշուած՝ աւանդատուներու ձեռքը յանձնեց։ Մշտապէս շփուած մը մէջ էր անոնց հետ եւ 1865ին, Պ. Ռօպինսընի մեռնելէն ետքը, գրեթէ անհաշուելի օրինական կնճիւղներ ծագեցան, որոնք մինչեւ այսօր կարգադրուած չեն։ Տիկին Կրին այն ատեն ձեռք բերաւ մէկ միլիոն տօլար, եւ այս եղաւ իր հարստութեան հիմը։

«Դրամս չահու զրի պետական արժէթուղթեր եւ Ռօք Այլէնտի երկաթուղեղ բաժնեթուղթեր գնելով, — կ'ըսէ Տիկին Կրին, — Միշտ խորհած էի որ կառավարութեան արժէթուղթերը լաւագոյն չահագործութիւնն են, եւ գուցէ տակաւին այնպէս կը խորհիմ։ Բայց լաւ գրաւներն ալ երկրորդ միջոց մը կը նկատեմ։»

Վէրմոնթյի հին ընտանիքի մը հարուստ մէկ անդամին՝ է. Հ. Կրինի հետ իր ամուսնութենէն յետոյ (1867) Ամերիկայէն մեկնեցան եւ շատ տարիներ Անգլիա բնակեցան այր ու կին : Էտուար Հուլանտ Ռօպինսըն եւ Սթիվա Անն Հուլանտ՝ իրենց միակ զաւակները՝ հոն ծնան : Երկուքն ալ կ'ապրին հիմա , ինչպէս կ'ապրի նաեւ Պ. Կրին , թէպէտ այսօր քիչ անգամ կը խօսուի իր վրայով : Ծերունի մըն է ան , գրեթէ 80նոց , եւ հիւանդկալ : Տանը երկու յարկերէն վերին իրենն է եւ հոն լաւ կահաւորուած պզտիկ սրահի մը մէջ կանցընէ իր օրերն ու գիշերները , մինչդեռ իր կինը Նիւ-Եօրքի մէջ իր սեղանաւորական գործերուն կը նայի : Երբ իրիկուան տուն դառնայ , երբեմն ընթերցումներ կ'ընէ իր էրկանը :

Օրիորդ Կրին որ բարձրահասակ եւ քիչ մը մօրը կը նմանի , օրուան մեծ մասը այցելութեամբ կ'անցընէ : Ընկերութեանց մէջ իայլելու շատ հոգ չընեն : Ամառը՝ Պէլլօզ Ֆօլս կ'երթայ , Վերմոնթի մէջ , իր մօրը հետ որ ամառանոց մը ունի հոն :

«Նէյտ» Կրին , ինչպէս կը կոչէ զանի իր մայրը , կը բնակի Թէքսաս : Ընդհանուր տնօրէնն է Թէքսաս — Միտլէնտ երկաթուղին որ Տիկին Կրինի կը վերաբերի : Վա. յեղուչ երիտասարդ մըն է գեղեցիկ գէմքով , եւ դրամ չահելու ու պահելու մասին իր մօրը ճարտարութիւնը ունենալ կը թուի : Ժողովրդական դարձած է կովարածներուն մէջ եւ խորունկ կերպով կը հետաքրքրուի քաղաքական խնդիրներով :

Անգլիա գտնուած ատենը , Տիկին Կրին շատ շուտ աւելցուց իր հարստութիւնը , խոհականօրէն գնելով Միացեալ Նահանգաց արժէթուղիներ : Մէկ տարուան մէջ 1,250,000 տօլարէն աւելի դիզեց միայն այս կերպով , եւ մէկ օրուան մէջ իր արդէն ահագին հարստութեան վրայ 200,000 տօլար աւելցուց ճարտար առուտուրով մը :

«200,000 տօլարը մեծագոյն դումարն է զոր չահած ըլլամ բրեք մէկ օրուան մէջ , — կ'ըսէ , յիշելով իր գործ առնութեանց մանրամասնութիւնները , — թէպէտ տնկէ աւելի չահած եմ մասնաւոր առեւտուրներու մէջ , Շատ դրամ

վաստակեցայ այն երկու դրամատուններուն երեսնէն զորս մէկ քանի մարդիկ եւ ես հաստատեցինք Լոնտոնի մէջ , իսկ այս երկիրը վերագառնալէս ի վեր , արժէթուղիներէն՝ շատ քիչ դրամ չահած եմ : Շահագիտութիւնը իր կանոն չեմ ընդունիր . եւ մարդոց կարծածին չափ չահագիտութիւն չեմ ըներ : Երբ այս ինչ չափ բաժնեթուղի մատուցում մը ըլլայ , սաչափ գնով , մէկ հատ միայն կը գնեմ եւ կը նայիմ որ ի՞նչ պիտի բերէ . եթէ արդիւնաւոր թուղթ մըն է , մնացածն ալ կը գնեմ : Եթէ ոչ , չեմ գներ : Այս էր իմ ծրագիրս , երբ սովորութիւն ունէի ձիու առուծալս ընել : Օրուան մը ժամանակամիջոց կ'ուզէի ձիու մը համար , եւ զայն ծախելէ առաջ կը նայէի թէ ի՞նչ պիտի բերէր : Իմ յաջողութիւնս կը վերագրեմ գլխաւորաբար այն կանոնին որուն համեմատ միշտ կը գնեմ երբ մէկը պէտք ունենայ ծախելու , ու կը ծախեմ երբ մէկը պէտք ունենայ գնելու : Ամէն ունեցածիս համար գին մը որոշած եմ , երբ այդ գինը գտնեմ՝ կը ծախեմ :

«Ամէն բան իմ խելքովս կ'ընեմ : Երբ դատ մը պատահի , անոր ամէն մանրամասնութեանց մէջ կը մտնեմ փաստաբանիս հետ , միեւնոյնն է ուրիշ գործերու համար ալ : Մէկէն ի մէկ վրդովում մը կ'ունենան գործի մէջ նետուող շատ երիտասարդներ , ու կ'ուզեն խիստ շատ բան ընել միանգամայն : Պատճառը այն է որ բաւականաչափ ծանօթութիւն չունին որ եւ է բանի մը վրայով , եւ բնականաբար կը սխալին : Ամսականաւոր պաշտօնեաներն ալ ընդհանրապէս կը վախնան որ իրենց վճարուածէն աւելին կ'ընեն : Ուղիղ հոգեով չեն մտներ գործերնուն մէջ : Առաջ երթալու եւ գնահատուելու համար՝ երիտասարդ մը պէտք է որ իր պաշտօնին համար իրեն վճարուածէն աւելի գործ տեսնէ : Երբ կ'ընէ այնպիսի բան մը որ իր տիրոջը մտքէն անցած չէր , ատիկա ցոյց կու տայ թէ արժանիք մը ունի : Մարդիկ կ'ուզեն միշտ լաւ ամսականներ վճարել անոնց որ իրենց համար բաներ կը մտածեն : Այն որ միայն ուրիշի մը մտածումներն ու դադարներն ի գործ կը դնէ , պարզ մեքենայէ մը տարբերութիւն չունի : Վստահելի մարդիկ միշտ կը փնտռուին : Այսօր ամէնէն հազուագիւտ բանը գործի աշխարհին մէջ՝ պէտք եղածին պէս վստահելի մարդն է » :

[Շարունակելի]

ՎԱՐԺԱՊԵՏԻՆ ՑԱԻԸ

Իր խորխուռ եւ անկայուն ապագային հեռապատկերը չէ ու ոչ ալ նպաստի անտուկին հաստատման մնայուն հանելուկը՝ որ տող կուտայ գրչիս : Ընել փորձելիքս պարզապէս թերատուները գծելն է իրեն , հայ վարժապետին , ու եթէ անչունչ այս բառերը մոգական հմայքով մը երգի փոխուէին , ապահովարար իշխաղիալչի տրտմագին հեծկլտութիւն մէկ անորոշ արձագանգէն տարրեր չեշտեր պիտի չունենային անոնք :

Ստիպուե՛ք մպտիլ ու ծիծաղ տալ ամբոխին երբ տառապանքը անցաւ ե ու անճուռ :

Վարժապետը հանելուկ մըն է :

Իր ասպարէզը որոշուած , ճամբան գրծուած , փառասիրութիւնը ամբողջ սահմանի մը մէջ կնքուած է : Կուսակրօն կղերին պէս ոչ ծայրագոյնի գաւազան , ոչ ալ եպիսկոպոսի մատնին կրնայ անցընել մտքէն , թէ եւ անոր պէս ստիպուած ըլլայ վարել թափառիկ կեանք մը , հոս ու հոն նետուած ու յաւէտ անշուք , անոր պէս ալ շատ անգամ ամուրի . ծննդավայրէն հեռու , սովորականէն կանուխ ձեր մկցընէ մազերը , ու վաղահաս ցուրտ ծերութեան րազուկներուն մէջ , ոգեւարի սնարին մօտ , սիրելիներ չի տեսնէ՝ հաւաքուած , այլ կորսուած , մոռցուած օրերու յիշատակը :

Դրական մարդոց համար վարժապետը ամսականաւոր պաշտօնեայ՝ մըն է միայն , աշխատութեան վարձկան մը , երկու անգամ երկուք չօրսի հաշիւով ի՞նչ մը : Դրական մարդը կը ծաղրէ վարժապետը , երբ ան ինքզինքը հոգինեւրու արուեստագէտ կը հռչակէ : Ընդհանուր եւ անիմաստ արհամարհանքին ընդմէջէն քալելու համար վարժապետը Յիսուսի հոգի՛ն կրելու է : Խօսքս փերեզակ-վարժապետներու համար չէ՝ անշուշտ , այլ անոնց որ կը զգան ու կը մտածեն ուղիղ մարդու դատադոյթեամբ : Ինքզինքնին դրական հռչակող մարդիկ մեղադրելի չեն , անոնց աչքերը տարված են աշխարհը գլխովայր տեսնել , անոնց համար խանութի ապրանքը սահապան մը ունի որ անբռնայի կը կոչուի ,

դպրոցի հոգինեւրու մթերքն ալ տրիշ մը՝ վարժապետ անունով : Անունի տարրերութիւն մը միայն :

Վարժապետը անտարրեր է այս քմծիծաղներուն , անոր համար արտաքին աշխարհը գոյութիւն չունի կամ պիտի չունենար , եթէ ամառն երսուն օրերը ինքնաբերական մէջ արագ արագ չի բոլորէին , ու քսակին նիշտութիւնը ֆիզիքական ուժերու ջլատման հետ սերտ կապակցութիւն չունենար :

Դպրոցին մէջ վարժապետը՝ յոյսերու գինովմը , փոխփառն բաղձանքներու մոգնիստացածն է :

Այդ կեանքը ուրիշ հրապոյր մը ունի , տեսակ մը ձգողութիւն , որմէ չեն ազատիր նոյն իսկ անոնք որոնք քանի մը տարի դըպրոցը կենալէ վերջ՝ կերթան չուկայի մարդեր ըլլալու եւ տեսնելու տարրեր աշխարհի մը իրարանցումը , խաժամուած , իր անդուռ այլափոխութիւններով : Մարդերու մէջ վարժապետն է որ մինակ մանուկ կը մեռնի : Ուրիշներու համար որոնք կ'ելիին գործի մէջ , ամէն բան հաշիւի մը արդիւնքն է . նոյն իսկ մահը , անգուղիկն հետ եղած սակարկութեան մը լրացումն է : Վարժապետը մանուկներու մէջ միշտ մանուկ կը մնայ : Օ՜հ , ուրիշ հմայք մը ունի այդ կեանքը :

Աշակերտի գրոտեղանէն բաժնուած հագիւ , վկայական կոչուած թղթի կտորը կուրծքին սեղմած , պատանի վարժապետը կը նետուի վերստին մանկութեան աշխարհը : Բաղդաւորները՝ որ լացաւութիւն կը կազմեն , մէկգլխով թողլով , շատ անգամ օտար մըն է վարժապետը , գիւղի մը անկիւնը նետուած , կամ մեծ քաղքի մը ամբոխին մէջ , ամէն տեղ սակայն ցնծագին , հրեշտակային մանկութեան ընկերը թառնածին : Մէկ տարի , երկուք , երեք , ու կը վարժուի նոր միջավայրին , իրեն հոգիին համար հին սակայն : Ամէն օր ծնողական դուրսուրանքին տակ զուարթ ու կայտառ մանուկներ կը չրջապտտեն զինքը , կամաց կամաց կը մոռնայ տա-

րիներուն անցնիլը : Իր մանկութենէն անբաժան կը մնայ . շատ անգամ կը հանդիպին ալիւորած վարժապետին , աչքը մանկային ժպիտով ու արտայայտութեամբ լեցուն : Ընկեր վարժապետներ կը նախանձին իրեն , ինք կը նախանձի անոնց . այդ նախանձները նոյն իսկ մանկային հով մը ունին վրանին որոնք միւս աշխարհին մէջ բրտացած , դրական մարդու մը ծիծաղը կրնան շարժել : Անցուցած կեանքը մագին մէջ քանի մը թեւ ճերմակ ձգած է , երբ կը նայի թէ հովը ուրիշ կողմ կը նետէ գինքը , սուր ցաւ մը կը զգայ սրտին մէջ իրեն ծանօթ մանուկներէ բաժնուելու ատեն , բայց շուտ կը բուժուի կսկիծը , երբ ուրիշ տեղ մը հաստատուի , — նոր մանուկներ , նոր ընկերներ , զարոյցական կեանքը միայն հին , որ շարունակութիւն մըն է անցեալին :

§ Եկեղեցիին մօտիկը , անկէ անբաժան են գրեթէ մեր բոլոր դպրոցները . այնպէս որ վանական հոգի մը կը բուրեն կարծես անդր աշխարհային մօտածմաներով շեշտուած :

Տարիքը առնելու մօտ , վարժապետը փառասիրութիւնը կ'ունենայ ընտանիք մը կազմելու : Իր լուսաւոր միջավայրին միջաւորիկ միգապատ ծերութեան մը սոսկումը պաղ պաղ կանցնի երբեմն սառեցունելով ճակատը : Մանուկ մըն է , ըսի , վարժապետը : Սրտին իտէպը երբեմն անհամեմատ բարձր կըլլայ իր դիրքէն : Անոր համար ամբողջ կը սկսի խնդալ վրան : Երգիծանքի սուր աղնաւորութիւն տակ վայրկեանի մը երազը կերթայ թաղուիլ կուրծքին անյատակ խորերը , անգամ մըն ալ ըյս չի տեսնելու պայմանով : Ամուրի կամ ամուսնացած , ալ թափառիկ տերեւ մըն է ան , քաղքէ քաղաք , գիւղէ գիւղ , մինչեւ հոն կեանքի հանելուկը կը լուծուի վարժապետին բազդին հետ :

Հարիւրաւորներ մօտիկ բրած են իր գասերուն : Անոնցմէ ոմանք սոպագային բաղդի բարձրագոյն աստիճանները կը հասնին : Վարժապետը գերմարդկային հրճուանք մը կը զգայ , գրեթէ դողալով ու ամէլիտ կանցնի դիտելով զանոնք հեռուէն : — Ժողովրդային երգերու հեղինակներ տեսած էք : Աղուոր , զգացումով լեցուն երգեր : Այդ հեղինակնե-

րէն շատերը անուն չունին . աղբիւրին գլուխը , կամ արտին մէջ իրենց այրած սրտէն կտոր մը ծրարած են անկապ բառերու եւ հառաչներու մէջ եւ ամբողջ իր սրտին մօտիկ գլուխելով զանոնք՝ առած , իւրացուցած է այլեւս Երեւակայեցէք այդ հեղինակներէն մէկը օտարութեան մէջ անծանօթ պանդոկի մը անկիւնը նստած մօտիկ , յանկարծ լսէ իր երգէն կտոր մը նուազիտ ու բեկրեկուն , հին , սիրուած շեշտերով : Ինչ զգացում կունենայ : Այդ անանուն հեղինակն է վարժապետը իր մօքին հին մէկ զաւակը տեսած ատեն :

§ Հետաքրքիր եղած էի հասկընալ թէ ինչ է վարժապետին մեծագոյն ցաւը : Շատեր ըսին թէ բնավայրէն եկող սիրականի մը մահագոյժը , ուրիշներ , թէ աշակերտի մը ապերախութիւնը , ուրիշներ՝ անպաշտօն մնալը եւ այսպէս շատ մը բաներ : Չեմ հաւատարկիւր ասոնց ու նոյն իսկ շատեր ալ կըրնայի աւելցնել , բայց հարցումս պատասխանը բաղդը տուաւ քանի մը օր տառչ : Նոյնութեամբ կը ներկայացընեմ Մաւիւնի ընթերցողներուն :

Մեսրոպեան վարժարանը շատոնց գաղթականի գաւակներ մեծամասնութիւն կազմել սկսած են տեղացիներուն վրայ : Բնականաբար կրնաք ենթադրել թէ բնդհանրապէս ազքատիկ տղաքներ են ատոնք , գունատ դէմքով , որոնց հայրերը , — եթէ ունին — հազիւ չոր հաց մը կրնան ճարել խղիկի մը մէջ իրարու վրայ լեցուած բազմանգամ ընտանիքին համար : Այս տարի երկուքը մեռան ատոնցմէ : Դասի ատեն , տղոց անունները կարդացուելուն , ավէն օր հոն է կարծես իրենց ստուերը , տիգոյն , դալիահոր մանուկներ : Ժամանակը այդ ցաւին վրայ չազդեր : Միւս մանուկներուն զտարթութիւնը քանի մը օր յիշած բան մը ունէր : Անցաւ ու երջանիկ են հիմա անցեալին պէս : Վարժապետը տարրեր կը մտածէ սակայն , ավէն անգամ աչքը պարտապարտեղաններուն հանդիպած ատեն , կը յիշէ միւս երկուքը , որ հիմա հանգիստ կը քնանան :

§ Չուհաճեանի մահէն քանի մը ժամառաջ ներկայ գտնուեցայ հոգեվարքին : Կիսախացած երկար մատները պատին վրայ նե-

տած իր շարժէր արագ արագ : Կոկորդէն խեղ-
դուկ հեւքով մը «ալլէ՛» կը մոլտար , իրր թէ
նուագախումբ մը վարէր , դաշնակին առջեւը
անցած : Չեմ հանդիպած վարժապետի մը
օրհասին , մանաւանդ պանդուխտ , ամուրի
վարժապետի մը : Կրնամ երեւակայել սակայն
թէ իր վերջին ցնորանքին մէջ , թէ եւ տէւոր

ու թարչամ երեսով , մանկային ժպիտ մը
պիտի ունենայ դէմքին վրայ , պիտի կարծէ
թէ ինք մանուկ մըն է տակաւին , ու մոլտ-
րուն աչքերով մայրենի փափուկ կուծքը պիտի
փնտռէ , մահուան ցուրտ գրկին մէջ հանգ-
չելէ առաջ :

Իգմիր

Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ

ՅՈՊՈՊ ՔՈՉՈՒՆ (*)

(Ա Ի Ա Ն Դ Ա Վ Է Պ)

Ձրքնաղ առտու մը գարնան
Ցօղոտ , կիսալոյս ,
Աղուօր աղջիկ մ'աննրման,
Հարսնցու մի կոյս ,

Լոգարանին մէջ մինակ ,
Անփոյթ պէրանքով,
Կը լուացուի ու ճերմակ
Շուշան մ'է տեսքով :

Մագերն սփիւռ. ոսկեգօծ՝
Կը սանտրէ անի ,
Ու կը սարսուռն լանջքը հոծ
Ու պորտն հոլանի :

Ու վարսերը կը ցրուին ,
Վիժակ՝ առնապան՝
Ծըփալով շուրջն իր մարմնին ,
— Խորան մաքրու թեան :

Այլ բաղնիքին կիսաբաց
Դռնէն՝ աղջրկան
Եղբօր աչքն է հանդիպած՝
Բըրոյ մերկութեան ... :

Օ՛հ , ինչ ամօր , Աստուան իմ ,
Փըրկէ , փրկէ՛ զինք ,
«Թռչուն մ'ըլլամ ու թռչնիմ
Երկինքէ երկինք ... »


Եւ աղուորը սարսուռազին
Ցանկարծ կ'առնէ քւ ,
Մոռցած սանտրը դեռ գլխին ,
Մագերուն վերել :

Յուզույ թռչունն է այսօր
Սիրուն աղջիկն ալ ,
Բըրուկն ալ՝ սանտրը անոր ,
Ըստ աւանդութեան :

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

(*) Ծ. Խ. — Ա. Յարութիւնեան , որ ԽՏՐԱՊՐՈՒԹԵԱՆ խնդրանքին վրայ՝ աշխատակցութեան աւելի լայն բա-
ժին մը նուիրել յանձն կ'առնու Մասիսին , բանաստեղծական նոր ճիւղ մը կը փորձէ այս անգամ՝ ոտանաւորի
վերածելով այս սիրուն աւանդավէպը որ հրատարակուած էր անցեալները Բիւրակնի մէջ , արձակ :

Ի Գ Ե Ա Ն Հ Ո Վ Ե Ր



Գ Ե Ղ Ը Կ Ս Մ Ա Լ Է Մ - Տ Ա Ղ Ի

Ռ

Ճատրակ ջըռու բաղեղնադատ անտառակներ՝ յոյս կոյս անտուներ ճիգերով՝ կու տան էլմալը—Տէրէյի անդրիացումներու այդ խումբին կանաչով հիւսուած հզօր անդորր մը, խորձիտ՝ խոնարհութեանը եւ լա՛յն՝ անձկութեանը մէջ. հակիրճ ու համարյայ երկինք մըն ալ կը փակէ վերէն այդ բոլորակ վայրը կախաղնաւոր եւ բարախուն, իր անհունակ բարդ կախարիչ մը հունին, կարի՛ հունին, — թերեւս հոն ալ է Մանտուացոյն Հովուականին երկու—երեք կանգուն երկինք ունեցող աշխարհը։ Եւ այդ առեղծուածային համառօտութեան մէջ է՝ որ տեղի կունենան ամէն տեսակ լուրջ եւ անլուրջ խաղեր՝ պոսակաւոր շրջիւններու հետ ազնուական միմեջիւններէ սկսելով մինչեւ պորտխաղն համարձակ ու կատակը ծայրայեղուած, հոն նաեւ՝ գէթ փիլիսոփայ հոգիք կառնէ առատ յագուրդ մը օդով ջուրով թափու կանաչութիւններով եւ սրտաթափ ներշնչութիւններով։

Հոն տանող եւ բերող ճամբան ալ ունի մեհնական բարձրադիր գեղ մը, որ հետզհետէ կը լայննայ ու կը փթթինազարդի հովանաւոր հանգարտութեամբ մը անհունի լայն խառնարանին մէջ՝ հորիզոնիդ լայննալուն համեմատութեամբ։ Բոլորի չափանակ, վայրի շրթ, կաղնի, խնկողկուզիկ եււն, պուրակները՝ զուարթ գիրկընդխառնութիւններով կը ծիծուղին յատակի ցախերուն եւ ցիրցան հարեան ցիկներուն վրայ, որ կարծես հիւսած է վայրին Պանը՝ Ժանեակի տնտեսուած պարզութեամբ մը. չա՛տ պարզ, այրիի մը հիւսած է՛ն ալ պարզ։ Այս ամէնը՝ բոյն դրած այդ հզօր կարծիր հողին վրայ՝ զազատայր օղուններու խշրտոցին եւ մեր սիրտերուն սկզբնական բարախումբին հետ՝ կեղանակեն ստեղծագործութեան առաջին թարմութիւնը՝ պարզապա՛ծ պահպանուած Ոլիմպին հզօր թեւերովը։

* * *

Ինք լեւն ալ՝ նուիրեալ ամէն լեւներու նման՝ իրր ամէն առտու իրիկուն կը մաքրուի կը սրբանայ ամպեղէն չփռմներով, որ յաճախ ալ յամեղով իր կատարներուն չուրջը՝ կու տան անոր երկրաբանական եւ երկրաչափական ձեւերուն, ինչպէս նաեւ չուրջ հորիզոնին գոգը ձեւ առած երեւոյթներուն, սինայական ծխող վեհութիւն մը. եւ արդեօ՛ք այդպիսի վարագուրեալ բարձր տեսակէտներէ ալ առնուած չէ՛ն հին խորաններուն, տապանակին, դրմբէթներուն սրբանուէր արգուզարդերուն մանրամասն նախագաղափարները ⁽¹⁾։ Մովսէ՛ս ինք Բեռլիէ՛լ մըն ալ էր։

Անգա՛մ մըն ալ, անգա՛մ մըն ալ երեւրու է այդ վսեմէն վեր. — հապա՛ երկու ոլիմբական կալաշ, մին միւսէն աղուաշ, Մելիքն ու Արթինն, սղոցուած ճայնով մը նշանը կու տան վերելքին. եւ կը կազմուի կարաւանը հինգ վայրկեանի մէջ, ու ճամբուն նեղկակ հիւսուածքին ագուցուելով՝ կը դառնայ կըլլայ իրր հարկը ետրտանոց գոյնզգոյն երիզ մը, երկու գոյն արու, երեք գոյն էգ, գոյն մը չէզոք եւ չորս չորս գոյն տղա՛յ մանուկ՝ դըպրոցէ գործէ փախած. կաշերես թմբուկն ալ իր թո՛ւնտ թո՛ւնտ քունքերով կը ներդաշնակէ լարուած երիզին գնացքը. — ահա՛ հասանք, չէ՛ դեւ չենք հասած, կը մօտինք կոր, երկա՛ր, շատ երկա՛ր — վերջապէս 40 վայրկեանէն կը հասնինք կատարը նուիրական, սրուն ամենաբարձր կէտին վրայ ուխտաւորները կոթողած էին տձեւ քարակարկաւ մը՝ յուսթի ու մեմիական։

Հոն՝ ա՛լ լրացած է տեսարանը։ Թռչուն վսեմութիւն մը հոն թեւատարած կը սուրայ en plein infini. անդո՛ւնդ մը հիացումի եւ

(1) Ելի. Ին-Իթ։

հա՛մը զգլխի՛չ ամբու մը հոն՝ ուր կը տրտիւնն ահեղ գիծերու վրայ հնկայ արեւին հուժկու արբանեակները , ճառագայթները :

* * *

Այդ սարհարթացեալ կատարը կայ եղեր , կըսէ աւանդութիւնն , անշուշտ յետ դիցական ժամանակներու , դղեակ մը , 5-6րդ դարերուն , եւ շուքանակի գիւղեր՝ արդի Ալէմին դաշտը : Թերեւս նաեւ հրանշան հեռագրութեան կայան մըն ալ , որուն նման շատեր կային Վասպորի նեղուցէն սկսելով մինչեւ Պարսկաստանի ներքերը : Այլ մենք ատեն չունինք այդ հին լրջութիւններով պարասելու . հարկ է զրօնուել , խնդալ , հիանալ եւ սքանչանալ հոն :

But lo ! Սխալ տեղ այսպէս գոչեց ապառու՛ Անգլիացին , Պայրն , սխալ տեղ Ս. Պետրոսի գմբէթին ներքեւ , ուր արձանացած են երեք դարու հրաշակերտ արուեստները : But lo ! «ո՛վ սքանչելի» : Ծիշդ տեղն է հոս այդ պոթութեւ գոչումին , ուր բնութեան անյեց գմբէթին տակ ժամագիր եւ զած են ի՛ր եւ արուեստին ալ հրաշքները՝ եօթը ութը հազար ու յաւիտեան տարիներէ հետէ : Աքանջելի՛ն հոս է , զոր չպիտի կըր. նանք ալ նկարել այժմ ինչպէս որ պէտք է :

Բայց այդ սքանչելիէն գէթ պատասպառելու համար մեր բժուտ աչքերը՝ կը սողոսկինք երկճիղ ցից քարածայոյի մը մէջտեղ , որ թեւեւ Պրիամուսի հարսերուն եւ Բիզասի փեսաներուն համբոյրներն ու հառաչանքն ալ արձանացուցած է հոն 2-3000 տարիներէ ի վեր : Եւ հոնկէ է որ լարուած նայուածքէ մը կերելի իբրեւ միօրեայ շուրջ հորիզոնը , որ անտես ծրարի մը մէջ առած է ծովերը , ցամաքը , երկինքն ու արեւը մենափառ , նեղուցն ու կիրճը , լեռը , սարը , ձորը , չալլ անտառն ու ծփանաւառ արտերը , ներգաշնակութիւններ ու աններգաշնակութիւններ , բլթանական ու բլեզանդական այս դէհերուն վրայ ի՛նչ որ կայ վսեմ , ինչ որ կայ չքնտի , ի՛նչ որ ստոյգ խորութիւն է , ի՛նչ որ անգումբէթ բարձրութիւն է , ուր աստքնութեա՛մը միայն կրնաս վերանալ , եւ եթէ այդ առաքինութիւնդ չզօրէ՛ ալ ինք

երկինքը կը խոնարհի տալու համար անոր թեւ :

* * *

Ես վայրահայեացս՝ այդ գէնիթ-նատիրին միջեւէն գէթ մասամբ մը մանրամասնելու համար այս ճաճանչատիպ հանրարանը , կը պարզիտեմ նախ ասիական նահապետ ցամաքը , թո՛ւխ , տրա՛մ , անյարգա՛ր եւ մաքո՛ւր ցամաքը , ուր ցածուն լեռնադաշտին մէջ ծանր ծանր ծրարուած են գեղջուկ եւ բունկալ հրապոյրներ , բոլո՛րն ալ միապոյն , պարզ այլ շատ ուժով միապոյն մը : Սեւ ու մարմարիկ ծովերուն ծանծաղ ծայրերը՝ հեղուկ քոյր եղբայրներու պէս՝ կը համուրեն այդ հաստատութիւնը երկու թեւերէն՝ ծովափնեայ ու կղզիական սեղմ գիրքերով , որ կը բովանդակեն աշխարհագրական գրեթէ բոլոր ձեւերը :

Արեւելքէն աւելի՛ ճօխ է արեւմուտքի կիսամասնը , զոր հազիւ հինգ վայրկեան մը կրցանք նկատել :


Ինք մեծ մայրաքաղաքն՝ իր գմբէթներովն , աշտարակներովն ու ցոլքերովն առած է կոկիկ գիւղաքաղաքի մը երեւոյթը , եւ Բերայի միջնադղային գեղեցկութիւնները՝ առած են ողորկ քարերու տարաամ կարկառակցաւի մը տեսքը , հոսկէ՛ ալ կը յաղթէ բնութիւնն արուեստին նեղութեան : Նեղուցին խորը խորը աճումները , Չամբճան , Գալիլ Տաղին , Փոքր-Աթոռը , Ֆիլ Տաղին եւ ի սկզբան անցած դաշտերնիս , որ մեծ մատեանին մէջ ա՛լ առած է իջի մը գիրքը , արեւելակողմի խրթին ելեւէջներուն հետ ճիշդ հակադրութեամբ մը խմբուած են հոն եւ կուտան Ալէմ գիւղին օստիսի մը կացութիւնը՝ պաշարուած բնաբերձ այդ բուրգերով : Եւ այդ բովանդակին վրայ նստած են թխտուն թխտուն 30ի շափ քառակուսի գիւղեր , որ կը պահեն մեծ մասով ամուլ բայց զիմացկան նախնականութիւն մը : Գրեթէ բնա՛ւ չի կայ հոն , երկու բացատիկէ՞ զատ , արուեստի չափը , շուրջը , բարձրերը , վերը , վարը , ծովուն , նեղուցին , ցամաքին վրայ խառ խառ կը փայլի գոյն գեղի , գոյն հողի , գոյն կոյս կանաչի , գոյն բնութեան , գոյն պարզութեան , գոյն եւ միշտ նոյն գոյն բնութեան :

Իսկ հորիզոնին միօրեայ լրութեանը մէջ՝
կը թրթռայ պերճ գութգութանքով վառ եւ
անահճայն մը՝ թռչուններու եւ անթիւնե-
րու, ձայն մարդու, ձայն հրեշտակներու,
թեթեւուկ ձայնն հողմի եւ անուշա՛կ ձայնն
անձրեւի, ձայն ծածանուտ արտերու, ձայն
անձայն ու ձայնաւոր ձայն սիրոյ, ձայն
երկրի, ձայն երկինքի, ձայն տիեզերքի
եւ ձայն Տեառն ։

Ա՛լ մեր իջմանն ալ տրուած է ձայնը ։ Եւ
կիջմանք՝ թողա՛վ լեւը միւս մը, լերան հի-
նաւորը սուրբ շահապետին, որ հանգչած
է հիւսիսային կողերուն վրայ՝ երեք մէդր ան-
փառ տապանի մը մէջ. մշտավառ կանթեղ
մը միայն լոյս կու տայ անոր անլոյս եւ ան-
գիր քարկոթողներուն։ Ո՞վ գիտէ ո՞ր սուրբն է ։

ԴԵՄՍՍ

ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ



ԿԵԱՆՔԸ

Բնախօսական կեանք եւ ընկերային կեանք. — Անհատական կասաբեկագործութիւն.

— Բնաւորութեան ազդեցութիւնը յառաջդիմութեան վրայ

Նախորդ տեսութեանս մէջ ջանացի ցու-
ցընել կեանքի, սիրոյ եւ շահու գաղափար-
ներուն միջեւ գտնուած կատարեալ համերաշ-
խութիւնը՝ որով այս գաղափարներէն մէկին
թերի քմբուտմը կամ միւսին տրուած չափա-
զանց կարեւորութիւնը՝ ամուսնութեանց աճ-
ման կամ անհատական բարօրութեան բարո-
յական զլիւստը արգելքներէն մէկը կրնան
նկատուիլ ։

Բացարձակ վայելքի կամ բացարձակ սի-
րոյ գիտաւորութեամբ կատարուած ամուս-
նութիւնները հազուադէպ կը համարուին. իսկ
բացարձակ շահու գիտաւորութեամբ կատար-
ուածներուն համար ըսե՞նք թէ արդի ամուս-
նութեանց մեծ ամասնութիւնը կը կազմեն ։

Ապրելու վայելքը երբ անգամ մը պակ-
սի, կամ սէրը որ մը տեղի տայ հակակ-
ութեան, կամ ինչքը երբ սպառի, ասոնցմէ
մէկին բացարձակ ստացմանը գիտաւորու-
թեամբ միացած անձեր շուտով կրնան կոր-
սընցնել յարաբերական երջանկութեան մը
տեսլութեանը համար անհրաժեշտ եղող հա-
ւասարակշռութիւնը ։

«Չկայ բան մը, կըսէ անգլիացի իմաս-
տասէր Ճօն Լալլըք, զոր մարդիկ այնքան
փափաղին՝ պահպանել քան կեանքը, եւ չկայ

բան մը զոր ուղղելու համար այնքան քիչ
ջանք ընեն» ։

Իսկոյնստ ըսած է. « Կեանքը կարճ է,
արուեստը՝ երկայն, առիթը՝ անցաւոր, փոր-
ձառութիւնը՝ խարուսիկ, գաղափարութիւնը՝
դժուար» ։

Բայց ի՞նչ է կեանքը. Շատերուն համար՝
ահա՛ տարօրինակ հարցում մը ։ Մտքերնիս
դրած ենք թէ բան մը զոր կատարեալապէս գի-
տենք եւ սրուն վրայ ա՛լ սորվելիք չունինք,
այդ ալ ապրելու գիտութիւնն է ։ Ո՛ւր սոր-
ված ենք գայն. շատ անգամ մենք ալ չենք
գիտեր եւ մտքերնէս չանցնիր որ այդպիսի
անհաճոյ հարցում մը ուղղուի երբեք մեզի ։

Այսքան ճապաղ ընդրոյ մը մեկնութեան
փորձը շատ ապերախտ եւ դժուար դորձ մըն
է որուն մէջ յաջողութիւն չեմ՝ յուսար գտնելը
ինքզինքս վարձատրուած կը նկատեմ, եթէ
կարենամ ընթերցողին ուշադրութեանը տիրա-
նալ վայրկեան մը միայն ։ Այս նպատակով՝
կը սահմանափակեմ քննութեանս շրջագիծը ։

Բնախօսական կեանքին վրայ խօսիլը դի-
տաւորութենէս դուրս է. որովհետեւ բնա-
խօսական կեանքը մարդկանց միայն յատուկ
չէ, այլ ամէն գործարանաւորեալ կենդանիի ։

Մարդիկ, ինչպէս նաեւ արարչագործութեան կենդանի մասին մեծամասնութիւնը, հաւասարապէս պէտք կը զգան սնունդի, որդեծնութեան եւ անբարեխառնութեանց դէմ պահպանման:

Առողջ ստամոքս մը թանկագին ստացուածք է՝ կեանքի որոշեալ պարագաներուն մէջ յաջողելու համար: Բայց, ինքնին, շատ սովորական եւ աննշան բան է խօսիլ այն/ժամանակին կամ ճիգին վրայ զոր կը վատնենք մեր սնունդին կամ զայն մեր քմաց համաձայն պատրաստելու համար:

Որդեծնութիւնը, մարդկանց համար, կարգ մը ընկերային պայմաններով պաշարուած է: Ահա՛ բոլոր տարբերութիւնը:

Անբարեխառնութեանց դէմ պահպանման պէտքերուն գաղով, ինչպէս հագուստ, բնակութիւն իրենց երկրորդական ամէն մասերով, այս օգտակարութեանց հայթայթման համար ալ վատնուած ճիգը եւ ժամանակը միեւնոյն նպատակին կը յանգին՝ որ է՝ բնախօսական կեանքին պահպանութեան շարունակութիւնը: Այս մասին ունեցած տարբերութիւննիր կը կայանայ գործածած միջոցներու մէջ:

Գերազոյն յատկութիւն մը կայ, սակայն, որ մարդու միայն շնորհուած է եւ ուրիշ կատարելապէս զուրկ են մնացեալ կենդանի աւրածները: այդ ալ ոչ թէ մարդու բանականութիւնն է, այլ ընկերականութիւնը եւ ընկերականութեամբ ալ կատարելագործելի էակ մը ըլլալը:

Կենդանիներէն մօտեց հոգեկան կամ բնկերական յատկութեանց վրայ զիտական հետազոտութիւններ կան: որոնք շատ հրահանգիչ են. բայց մեր քննութեան շրջապատէն դուս կը մնան. ուստի՝ վերագառնանք մեր նիւթին:

* * *

Ընտանիքի կազմութիւնը՝ ամուսնութեամբ, մարդու ընկերականութեան համար ունեցած գերազոյն յատկութեան արտայայտութիւնն է: Բայց ընկերակցութիւն մը որ կը կատարուի ընտանիքի կազմութեան կամ ամուսնութեան ըմբռնումով միայն, դեռ շատ հեռու կը մնայ կեանքի բուն նպատակէն որ է՝ անհատական կատարելագործութիւնը:

Սնանելու համար ուտելիք, բնակելու համար տուն, չի մտելու համար զգեստ կամ անկողին, որդեծնութիւն, ահա կեանքին ամէնէն գոհիկ եւ ամէնէն աննշան պէտքերը: Եւ եթէ երբեք ասոնք միայն եղած ըլլային կեանքը բաղկացնող տարրերը, ի՞նչ դիւրին բան կ'ըլլար կեանքը որ՝ իրապէս, այնքան դժուար է, այնքան ծանրաբեռն ու այնքան պատասխանատուութիւններ կը ստեղծէ:

Պիտի սուարկուի, անշուշտ, թէ բերաւոր մարդկային էակներ կան զրկուած, այսօր, ապրելու այս տարրական միջոցներէն զուր թեթեամտութիւն պիտի ըլլար անուանել գոհիկ կամ աննշան:

Այս առարկութեան տեղի չկայ, առայժմ, քանի որ ապրելու պայքարը միշտ եղած է եւ պիտի ըլլայ: Ներկայ խորհրդածութիւնները կը վերաբերին այս պայքարէն առերեւոյթ յաջող եղած էակներուն որոնց թիւը չյաջողածներէն աւելի է, բարբառողդարար:

Եթէ, ստուգիլ, աւելի բազմաթիւ են կեանքի բնախօսական պէտքերուն գոհացում տալու կարող էակները, ինչպէս կը դիտուի գէթ քաղաքակրթեալ երկիրներու մէջ, պէտք չէ ուրեմն զարմանալ որ առանց անհատական կատարելագործութեան պայմանին՝ այդ պէտքերուն պարզ գոհացումը անբաւական նկատուի: Կատարելագործութեան պակասութեամբ՝ բնախօսական կեանքը կրնայ իսկ ենթարկուիլ անհետանալու վտանգին:

Ի՞նչ նշանակութիւն կ'ունենայ ուրեմն, զաւակներու ծնունդ տալը՝ եթէ կինը կաթ տալէ, լաթ լուալէ կամ կերակուր եփելէ ուրիշ բանի մէջ չի կատարելագործուիր, կամ եթէ այլը նիւթական պէտքերու հայթայթման համար պարզ գործաւոր մըն է: Ո՞ր կը մնայ այն ատեն անհատական կատարելագործութիւնը եւ ընկերային յառաջդիմութիւնը:

* * *

Կայ երկրորդ առարկութիւն մըն ալ՝ որ կարեւոր կրնայ սեպուիլ: Մարդս կենդանեաց նման չի գոհացներ իր բնախօսական աննշան պէտքերը, այլ ընկերականութեամբ ու կատարելագործութեամբ:

Սննդաւորութիւնը, մեզի համար, չի սխիւր

միայն ծնօտի շարժումով եւ չի վերջանար լս-
ւիւմով : Բնակութիւննիս պարզ կազմակեր-
պութիւն չունի . հագուստնիս շատ կեճառոտ
է . ոչ նուազ մանուածապատ են մեր մնաց-
եալ անշան պէտքերը զորս բնախօսական ան-
ուանելով կը գտնանանք :

Այս առարկութիւնը կարեւոր նկատել ու-
զեցինք , բայց կարծուածին չափ կարեւոր չէ .
որովհետեւ , մարդկային արդի բնախօսական
կեանքին նրբութիւնները եւ պահանջումներն
արդէն անցած գացած հեռուոր դարերու կա-
տարեւագործութեանց արդիւնք են , զոր ժա-
ռանգած ենք աշխարհ եկած օրերնիս : Մենք
այնքան վարժութիւն ստացած ենք այս նորր
ու այլազան պահանջմանց գոհացում տալու
գործին մէջ որ՝ աշխատութեան բաժանման
օգնութեամբ , կատարելապէս դիւրութեամբ
այս կարգի պարտականութիւններու մէջէն
կ'ելլենք եւ՝ դարձեալ , պարտաւր երկայն ժա-
մեր կը մնան մեզի , անհատական ու ընկե-
րային կատարեւագործութեան նուիրուելիք :

Ճիշդ այս տրանսպրէնի պարապոյ ժամե-
րուն մէջ կ'արտայայտուի եւ կը ծաղկի մարդ-
կային գոյութեան այն մասը զոր աւելի յօ-
ժարութեամբ կեանք կ'անուանենք հոս , եւ
որ սերտ յարաբերութիւն ունի խրաքանչիւր
անհատի իսկական բնաւորութեանը հետ :

« Կեանքը , կըսէ Ալէքսիս տը Թօգքըվիլ
« ֆրանսացի նշանաւոր պատմաբանը , ո'չ հա-
« ճոյք է , ո'չ վիշտ , այլ ծանրակշիւ գործ
« մը որով բեռնաւորուած ենք , զոր պար-
« տինք վարել եւ վերջացնել պատուով » :

Ստուգիւ՝ այնքան վարժ ենք մեր կեն-
դանա-ընկերային կեանքի սովորական պէտ-
քերուն հայթայթման ու կարգադրութեանը ,
որ քիչ անգամ՝ կը թերանանք անոնց մէջ :
Ընդհակառակը , կեանքին պատասխանա-
տուութեան զգացումը ամէնէն աւելի կը
ճնշէ վրանիս մեր պարտաւր տրամադրելի ժա-
մերուն մէջ , Փոխանակ օգտակար ընելու այս
ժամերը անհատական եւ ընկերային կատա-
րելագործութեան նպատակին՝ կը վատենք
զանոնք ապարդիւն , եթէ երբեք չի գործա-
ծենք ի վնաս մեր զարգացմանը եւ երբեմն
իսկ մեր պատուոյն :

Ի՞նչ միջոցաւ մարդ կրնայ արդիւնաւորել

իր գերագոյն յատկութիւնը որ կը կայանայ
կատարեւագործելի էակ մը ըլլալուն մէջ :

Անշուշտ յարատեւ աշխատութիւնը ամե-
նակարեւոր պայման է . բայց աշխատութիւնը
առանց խելացի դրութեան մը կամ առանց
նպատաւոր միջավայրի , կը կորսնցնէ իր ար-
տադրիչ գորութեան մեծ մասը : Միջավայրի
խելացի ազդեցութիւնն է որ ամփոփ կը պահէ
աշխատութեան գորութիւնը :

Self-Help (Ինքնօգնութիւն) հեղինակը ,
տնղիլացի Սամիւըլ Միլս , սապէս կը խորհի .
« Մարդ անհունապէս աւելի կը կատարեւա-
« գործուի աշխատութեամբ քան ընթերցմամբ ,
« աւելի կեանքն է քան գրականութիւնը ,
« աւելի գործողութիւնը՝ քան ուսումը , աւելի
« բնաւորութեան ազդեցութիւնը՝ քան կեն-
« սագրութիւնը , որոնք անդադար կը ձգտին
« մարդկութիւնը զարգացնելու : »

Այս է , ահա՛ , բացօթեայ ու գործնական
դաստիարակութիւնը զոր ամէն ոք՝ այր թէ
կին , պարտի ստանալ այն միջավայրներուն
մէջ ուր մարդիկ կը շարժին միջիւններու նման ,
ըլլայ քաղքի մէջ թէ դաշտի , գործարան-
ներու թէ գրասենեակներու , գրամատուռնե-
րու թէ արուեստանոցներու , վերջապէս աշ-
խատութեան ուրիշ շատ կեդրոններու մէջ :

Այս դաստիարակութեամբ հիմը կը հաս-
տատուի առտնին գործունէութեան ճիշդ այն
տրամադրելի ժամերուն մէջ ուր չենք զբաղիր
մեր բնախօսական պէտքերուն գոհացումով :

Եթէ կեանքը այս պէտքերու գոհացումէն
զատ ուրիշ նպատակ ունեցած չըլլար՝ շատ
դժբաղդ պիտի նկատուէր մարդութիւնը եւ
չուտ պիտի յուսահատէր իր ապագայէն :

Յայտնի է թէ աշխատութիւնը , պարկեշ-
տութիւնը եւ խոհեմութիւնը զլիսաւոր յատ-
կութիւններ են որոնցմով ամէնէն աւելի կը
պահպանուին մարդկային ընկերութեան մէջ
գտնուած բարի մատակարարութիւնը , յաջո-
ղութիւնը եւ բարգաւաճումը :

Յառաջդիմութիւնը անշուշտ կը ծնի այս
յատկութիւններէն . բայց ատենք աւելի պահ-
պանողութեան յատկութիւններ են եւ այն-
քան ուղղակի չեն նպատակը բուն իսկ անհա-
տական կատարեւագործութեան՝ որքան մտա-
ւորական գործունէութիւն եւ ձեռներէցու-
թեան ոգին :

Այս ամէն խորհրդածութիւններու հետեւանքով, կեանքի սա բարոյական երեք նպատակները, այսինքն՝ բնկերականութիւնը, յառաջդիմութիւնը եւ կատարելագործութիւնը, կը վերածուին անհատական բնաւորութեան պարզ խնդրին:

Այս զանազան նկատումներուն իրարու հետ ունեցած յարակցութիւնը եւ համերաշխութիւնը այնքան զարմանալի կերպով ճշմարիտ է՝ որ այժմ մեր սկզբնակէտին կը վերադառնաք անկէ բաւական հեռանալէ վերջը՝ Ստուգիւ՝ բնաւորութեան բարոյքումը եւ զարգացումը այն ատեն կ'արտայայտեն իրենց կատարեալ արդիւնքը՝ երբ մարդ ամէնէն քիչ զբաղած է իր բնախօսական պէտքերուն գոհացումովը, որ է ըսել կեանքին այն պարագայ ժամերուն մէջ զոր ընդհանուր կերպով տրամադրելի անուանեցինք:

Երբ մարդիկ զիտուին եւ զննուին կատարելագործութեան յարմար այս տրամադրելի ժամերուն մէջ, երկու գլխաւոր տիպար կը ներկայացնեն. ներգործական տիպարը եւ կրաւորական տիպարը:

Այս սովորական երկու տիպարներէն ո՞րը փափագելի է որ զերակիւ ըլլայ մարդկութեան ընդհանուր օգտին համար:

Այս հարցման սապէս կը պատասխանէ Ճոն Սթիւարթ Միլ, անգլիացի մեծահամբաւ տնտեսագէտ-իմաստասէրը.

« Զօրեղ եւ ազգու բնաւորութեանց վրայ
« կը զմայլինք. բայց մարդկանց մեծամասն
« նութիւնը, անձնականապէս, կը նախընտրէ
« հանդարտարարոնները: Ինչ կրաւորական
« մաս որ գտնուի մեր մերձակներուն սկա-
« ւորութեանը մէջ՝ կ'աւելցնէ գոհացումը.
« թեան զգացումնիս, եթէ անոր չունենանք
« անոնց գործակցութեանը՝ կրաւորական
« բնաւորութիւնները մեր համարձակ վրայ որ-
« գելք մը պակաս կը նկատուին: »

« Սակայն՝ ասկէ աւելի չընտրիր իմ չկող
« թէ մտաւորական կեանքի մէջ տեսնուած
« ամէն յառաջդիմութիւն լուազողին արդու
« բնաւորութեանց արդիւնքը եղած է եւ թէ
« գործոն մտքի համար աւելի գիւրին է հա-
« բերութեան վարժութիւնը քան կրաւորական
« մտքի մը՝ զօրեղ յատկութիւններ ստանալ: »

Կարելի՞ է արդեօք նկատել թէ մեր շըրջանակին մէջ շատ կան իրապէս զօրեղ մտքեր

որ կը յաջողին օգտակար գործունէութեան մը ճամբուն մէջ մտցնել կրաւորական եւ ծոյլ բնաւորութիւնները: Ներելի՞ է արդեօք նկատել թէ մեր մանաւանդ ընտանեկան շրջանակներուն մէջ գիտուած դժգոհութիւնները, թէ՛ ըլլայ այրերուն կողմէ եւ թէ կիներուն՝ իրարարու նկատմամբ փոխադարձաբար, ճշմարիտ նշաններ են, ջերմ փափագներ են դէպ ի յառաջդիմութիւն եւ մանաւանդ դէպ ի անհատական կատարելագործութիւն:

Իցի՛ւ թէ այնպէս լլլար:

Առանին վէճերն ալ կ'արդարանային ստով:

ԱՐԱՐԻՆԷ

ՆԱԼԱՍՏԻՅ Թանձնաժողովը որ երեքշաբթի գումարուեցաւ Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ, Պատրիարքութեան մէջ, որբանոցներու վրայ ընդհանուր խորհրդակցութենէ մը ետքը, որոշեց որ գաւառային նպաստընկալ վարժարաններուն նախնական դասագիրքերը միայն զրկուին. խիստ անոնց զրեհական ուրիշ պիտոյքները յանձնուելու համար ներկայացուցիչներ ցոյց տրուին այստեղ:

ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՅՑ Պագուի ու Նախիջեւանի մէջ իր թատերական փայլուն շրջանը բոլորած՝ մայրաքաղաքս վերադարձաւ ուր շատ կարճատեւ պիտի ըլլայ իր վայելելիք արձակուրդը, վասն զի կը պատրաստուի Բարիկ ուղեւորիլ, Արուեստահանդէսը այցելելու, մասնաւորապէս բեմական արուեստի մասին ուսումնասիրութիւններ կատարելու համար:

ԳՐԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԳԱԽԱՌԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐՈՒ

Գահիրէի Հոգատար Որբանոցն ընկերութիւնը մէկ օրինակ տարեկան Մասիս նուիրեց Արաբիկի որբանոցին: Նոյնպէս մէկ օրինակ տարեկան Մասիս նուիրեց Ակնայ որբանոցին: Գահիրէական ժամօժ ազգայիններէն Սեդրակ էֆ. Դաիթեան:

Սոյն քերթերը սկսանք զրկել յունիս 1էն:

ԱՆՏՈՆԱՏԵՐ Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆինանսըլար եօզուշու, Թիւ 27

ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹԵՐՈՒ

ԳԼԽԱՒՈՐ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ

ԲԻԻԶԱՆԴԻՈՆ. Թ. 1107-1112 : Գաղթա-
կանութեան պէտքը, կարեւորութիւնն ու տե-
սակները. Ա. Գ. — Կմախք մատենախօսա-
կաններ. Տիրալը վրդ : — Դ. տարեգարձ Իզ-
միրի ներսէսեան Որբանոցին : — Թղթակցու-
թիւնք եղեռնայէ եւ Ռօտոսթոյէ : — Խնչ
կանցնի կը դառնայ (Քաղաքական տեսու-
թիւն) Բիւզանդ Բեչեան : — Եկեղեցական
տարազներ. Հորոյ : — Բարքերու նորութիւն-
ներ. Գ. Զարուհի : — Մեր որբերուն ու որ-
բուհիներուն ապագան. Մ. Ա. Թուրեան : —
Արշակ Տէր Միքայէլեանի տեսութիւնք ամուս-
նական խնդրոյն վրայ (Խմբագրական). Բ.
Բեչեան : — Անգլիոյ պատերազմը եւ Գաղ-
ղիոյ Արուստահանդէսը. Ա. Մուրաճեան : —
Այցելութիւն մը կայս. հնութեանց Թանգա-
րանը. Դ. Նաչիւրնց :

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ. Թ. 383-388 : — Թրանս-
վալէն յետոյ. — Չինական խնդիրը. — Ռու-
սիա եւ Անգլիա Չինաստանի մէջ. — Ռուսիա
եւ Ճարոն չինական խնդրոյն մէջ (Քաղաքա-
կան տեսութիւններ) Լիոնիէ : — Էջ մը Պա-
րոնեանի գրուածքներէն : — Գիտական Դրո-
նիկ. Կ. Տեմիրեան : — Խարուսիկ նուագներ.
Ամաթօն : — Հակասական ընթացքներ. Վ. —
Ժանտախտը եւ իր դարմանը. Տոթ. Կ. Մու-
րաճեան : — Հոգւոյ անմահութիւն. (Թարգմ-
անգլ. Բ. Գ. Գարեգին) : — Միթթարեաննե-
րու պաշտպանողականին առթիւ. Գր. Մալ-
խաս : — Ուրիշներու պերճանքը (Խմբագրա-
կան) Զարուհի : — Լեզուներու ծագումը.
Բ. Ոսկերիչեան :

ԱՐԵՒԵԼԻՔ. Թ. 4337-4342 : Եւրոպա,
Ամերիկա ու Չինաստան (Քաղաքական տե-
սութիւն) Զ. Ե. — Հանդէսներ Բարիցի մէջ :
— Ռօպէրդ Գոլէճի մրցախաղերը : — Նամակ
Ռուսաստանէ. Ա. Ապրէսեանց : — Թղթկց.
Երուսաղէմէ. Վրոյր : — Զիարչու Սամսոնի մէջ.
Պ. Գ. Սիւննեան : — Նորերուն համար. Ա.
Յարութեան : — Իզմիրի կեանքէն. Արշա-
ւիր : — Աջ ու ձախ. Նորերուն շուրջը. Ա-
րաւ Անճոնեան : — Համարատեսութիւն Իզ-
միրի ներսէսեան Որբանոցի Ընկ. Գործադիր
Ժողովին. Ռ. Որբերեան : — Տիպար ոսկե-
րիչ մը. Ա. Յ. Այվազեան : — Հերքումը
(Խմբագրական) Զ. Ե. — Բազմիք գործն.
գիտութեանց. Մ. Յ. Ճեզայիրեան : — Կար-
նոյ գործեր. Նորայր : — Մայիսի բնութիւնը
կարնոյ մէջ. Գ. Ճիյերճեան :

Կ. Ա. ՈՍԿԱՆ

ԱՌՁԵՈՒՆ ԲԱՌԱԳԻՐԲ

ՀԱՅԵՐԷՆԷ ՖՐԱՆՍԵՐԷՆ

ԱԻԵԼԻ ՔԱՆ 25,000 ՐԱՌ, ՈՃ, ԵՆԱՅԼԷ

Գին զօրաւոր քաղաքի կազմի 25 դր.


Գին ընթիւ լաքակազմի 27 դր.

Կեդրոնաւոր է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ Վաճառատունը

Ֆինանսներու եօզուղու, Կ. Պոլիս

Կը գտնուի ամէն գրավաճառաց քով :



ՆՈՒՆՈՒ ՀՈՄ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Որ կը մրցի միւս բոլոր կարի մեքենաներուն հետ

ՊԱՐԶՈՒԹԵԱՄԲ

ՏՈԿՈՒՆՈՒԹԵԱՄԲ

ԱՐԱԳՈՒԹԵԱՄԲ

ԹԵԹԵՒՈՒԹԵԱՄԲ

ԱԺԱՆՈՒԹԵԱՄԲ

Թուրքիոյ համար միակ ներկայացուցիչ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Կ. ՄԻԱՆԵԱՆ

Կեդրոնաւոր, Սիւրբէճի, Քէօրիւլիս խան, Թիւ 3

Մասնաճիւղ, Ղալաթիա, Պէօլիք Միլլէթ խան, Թիւ 33

Գնողներու համար վնասման եւ ամէն տեսակի դիւրութիւններ



Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ ԹՂԹԱՎԱՋԱՌԱՆՈՑ

Թիւ 27, Ֆինանսներլար Եօգուշու

(ՊԱՅՊԸԼ ՀԱՌԻՋ)

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ Թղթավաճառանոցը իր զանազան տեսակ ՆԱՄԱԿԻ ԹՈՒՂԹԵՐՈՒ ԵՆ ՊԱՋԱՐԱՆՆԵՐՈՒ օրինակները պարունակող նոր հաւաքածուներ պատրաստած ըլլալով, կը հրաւիրէ Պատուարժան հասարակութիւնը որ այդ կարգի գնումներ ընելէ առաջ հանի անգամ մը աչքէ անցընել իր օրինակները եւ բաղդասել գիները :

Ամեն կարգի յանախորդք կրնան վստահ ըլլալ քէ Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ ԹՂԹԱՎԱՋԱՌԱՆՈՑԻՆ մէջ պիտի գտնեն իրենց գործին գալիք ապրանք մը, միշտ չափաւոր գինով :

Մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրուի Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ Թղթավաճառանոցի ՏՈՄԱՐՆԵՐՈՒՆ վրայ որոնք նոյն իսկ Մասթոսեան Կազմասան մէջ պատրաստուած ըլլալով՝ աւելի խնայողութեամբ ձեռք կը բերուին եւ ասկէ գոյացած շահը ուղղակի գնողին կը քողուի :

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆԻ Տոմարները ՀԱՒԱԳՈՅՆ ըլլալով հանդերձ՝ գիներն ալ խիստ ԱՃԱՆ են :

Ի Ի Ն Ի Օ Ն

ԱՊԱՂՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնուած 1828—1829 ին



ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՀԻ ՃԻԻՂԻՆ
97 Միլիոն

ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՅ ՃԻԻՂԻՆ
137 Միլիոն

Ընկերութեան զրամատուան է
ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Պուլկարիոյ Տնօրէն

Սիւնն եփ. Քաջահրէան

Կենաց ճիւղին տեսուչ

Միհրան եփ. Տէր Ներսիսեան

Կ. Պոլիս, Կալաթա, Թահապուրուն խան
Օսմ. Պանքայի ղէմ



ՌՕՍԻԱ — ROSSIA



Ա.ՊԱ.ՀՈՎԱ.ԳՐԱ.ԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆԲ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆԻՆԲ, ԱՐԿԱԾԲ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ

34,775,642 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար

121,765,333 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000 »

Կեդրոնատեղի, Ղալաթիոյ Քարափին վրայ, Մաքսան հին տեղը

Ընդհ. Քննիչ

Ընդհ. Գործակալ

Ա. ՀԻԻՐՄԻԻՉ

ԹԷՈՏՈՐ ՌԷԲԲԷՆ